ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N ---- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 114-րդ կետի 8-րդ ենթակետում «5 րոպե» բառերը փոխարինել «3 րոպե: Պատասխանից հետո հարց տվողը և զեկուցողը իրավունք ունեն արձագանքել՝ մինչև մեկական րոպե տևողությամբ» բառերով:

2) 114-րդ կետի 11-րդ ենթակետում «Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները և Խմբակցությունների ղեկավարները հարց են տալիս ու ելույթ ունենում արտահերթ» բառերը փոխարինել «Մտքերի փոխանակության ժամանակ Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները հարց են տալիս ու ելույթ ունենում արտահերթ, իսկ խմբակցության ղեկավարը (կամ նրա բացակայության դեպքում քարտուղարը) կարող է պահանջել խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթ՝ հայտարարելով ելույթ ունեցող խմբակցության անդամի անուն-ազգանունը»:

3) 119-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«119. Ավագանու նստաշրջանների ընթացքում՝ երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում, Ավագանու անդամի բանավոր հարցերին պատասխանում են Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները, վարչական շրջանների ղեկավարները և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները:»

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 119.1-րդ կետով.

«119.1 Ավագանու հերթական նիստին՝ օրակարգային հարցերի քննարկման ավարտից անմիջապես հետո, նիստը վարողը հայտարարում է մտքերի փոխանակություն, որի ընթացքում ավագանու յուրաքանչյուր անդամ կարող է հանդես գալ մինչև հինգ րոպե տևողությամբ ելույթով: Ավագանու անդամները ելույթ

են ունենում ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողի կողմից ելույթ ունեցողի անուն-ազգանվան հայտարարմամբ։»

5) 120-րդ կետի 7-րդ ենթակետում «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ **Է. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն փոփոխությունների նպատակն է կանոնակարգել և բարձրացնել ավագանու նիստերի արդյունավետությունը:

Փորձը ցույց է տվել, որ ավագանու անդամները կարիք են ունենում ելույթ ունենալ օրակարգային հարցերից դուրս թեմաների վերաբերյալ, որի հնարավորությունը գործող կանոնակարգը ըստ էության չի ընձեռում: Այդ նպատակով առաջարկվում է օրակարգային հարցերի քննարկումից հետո ավելացնել մտքերի փոխանակության բաժին, որի ընթացքում ավագանու անդամները հնարավորություն կունենան ելույթ ունենալ իրենց հուզող հարցերի վերաբերյալ: Այս փոփոխությունը կնպաստի նաև ավագանու ինստիտուտը զարգացնելու և այն ավելի քաղաքական մարմին դարձնելու նպատակին:

Աշխատակազմի հետ հարց ու պատասխանին 3 րոպե ելույթով արձագանքելու հնարավորությունը ավելացվել էր օրակարգային հարցերից դուրս ելույթ ունենալու նպատակով: Քանի որ ավելացվում է հավելյալ, ազատ թեմայով ելույթների բաժին, ապա 3 րոպե ելույթով արձագանքելու հնարավորության կարիքն այլևս չկա:

Օրակարգային հարցերի քննարկման ընթացքում, զեկուցողին հարցեր ուղղելուց հետո ավագանու անդամները հաճախ արձագանքելու կարիք են ունենում, որը գործող կանոնակարգը թույլ չի տալիս և որի հնարավորությունը տրվում է սույն նախագծով:

Աշխատակազմի հետ հարց ու պատասխանը ամենամսյա դարձնելու հիմնական պատճառներից էր այն, որ ավագանու նիստերի ընթացակարգը թույլ չէր տալիս օրակարգային հարցերից դուրս ելույթ ունենալ: Քանի որ սույն նախագծով ավելացվում է օրակարգային հարցերից դուրս ելույթ ունենալու հնարավորությունը, առաջարկվում է հարց ու պատասխանը վերադարձնել նախորդ՝ երկուամսյա ձևաչափին, բացի այդ սույն փոփոխությունը չի սահմանափակում հարկ եղած դեպքում յուրաքանչյուր ամիս քաղաքապետարանի աշխատակազմի հետ հարց ու պատասխան անցկացնել հնարավորությունը, քանի որ թե առաջարկվող փոփոխությամբ և թե «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներում օգտագործվում է «առնվազն» եզրույթը:

Գործող կանոնակարգի համաձայն՝ խմբակցության ղեկավարների արտահերթ ելույթները վերաբերում են ելույթներ ունենալու հերթականությանը, սակայն դրանք օգտագործվում են որպես հավելյալ ելույթ: Գտնելով, որ հավելյալ ելույթի անհրաժեշտություն երբեմն առաջանում է, սակայն այն չի համապատասխանում գործող կանոնակարգով սահմանված ընթացակարգին՝ առաջարկում ենք խմբակցության ղեկավարների արտահերթ ելույթ հասկացությունը փոխարինել խմբակցության անունից արտահերթ ելույթ հասկացությամբ, որից կկարողանան օգտվել ինչպես խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը, այնպես էլ խմբակցության ղեկավարի, իսկ վերջինիս բացակայության դեպքում քարտուղարի առաջարկով՝ խմբակցության այլ անդամներ: Խմբակցության անունից արտահերթ ելույթի նպատակներից է նաև ավագանու այլ անդամներին հարկ եղած դեպքում արտահերթ ելույթի հնարավորություն տալ, քանի որ երբեմն, քննարկվող հարցերը լինում են կոնկրետ ոլորտներին վերաբերող և այդ դեպքում խմբակցության ղեկավարները կարող են

խմբակցության անունից արտահերթ ելույթի հնարավորությունը տալ քննարկվող հարցի վերաբերյալ ավելի մասնագիտական հմտություններ ունեցող ավագանու անդամին:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Է. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում Երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Է. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Է. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, առարկության հեղինակը	**Առաջարկության, առարկության բովանդակությունը**
1.	ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան	114 կետի 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Մտքերի փոխանակության ժամանակ Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները հարց են տալիս ու ելույթ ունենում արտահերթ, իսկ խմբակցության ղեկավարը (կամ նրա բացակայության դեպքում քարտուղարը) կարող է պահանջել խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթ՝ հայտարարելով ելույթ ունեցող խմբակցության անդամի անուն-ազգանունը»: Առաջարկն ընդունվել է, կցվում է լրամշակված տարբերակը:
2.	Երևանի քաղաքապետարանի իրավաբանական վարչություն	2-րդ կետում «տասներորդ օրվանից» բառերը փոխարինել «հաջորդող օրվանից» բառերով: Առաջարկն ընդունվել է, կցվում է լրամշակված տարբերակը:

ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Էդուարդ Ավետիսյան